

# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀՐԴԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ԽՆՔՆԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ.

Արիշներին յառաջ տանելու համար՝ թղ էր պէտք է յառաջ գնաս. ուրիշները ինքնակրթութեան ծարաւը արձարածեցւ համար ինքդ էլ պէտք է ձգտիս ինակրթութեան: Չի կարող հարցանալութիւնը: Կմացութեան բոլոր ըըրջանակրի մէջ, թէ մտաւոր և թէ բարոյական զնակրում իւր անձը կատարելագործութիւնը՝ մարդու մէջ անառնում է. բայց դա շատ անգամ տհաս է մուռ և կամ խափանվումէ մարդու մէջ: Իւր անձը բազմագէտ կարծելու յամառութիւնը ժողովրդական ուրառուցեան անձնակրթութեան զլիաւոր խոշնդուաներից մին է: Ո՞ի տգէտ բազմութեան մէջ, մանուկներով շրջապատուած գոլով, ուրառուցիւնը սկսում է մտածել, թէ ինքը առ ու բարձր է, թէ իրան հարկաւոր եղած առաջայի բանը զիտէ, թէ յաւիտեան հօջադրէ չարչարուի գրքերի վերայ, և թէ իւր խմացածը մանուկների համար շատ շատ է: Ով որ կճանաչէ իմացութեան առաջնորդ շրջանը և իւր սահմանադրական բարձրութիւնը և ամ պիրով և եւանդով կջանաց

է ու պարզաբերմբն իւրեանց թափանցին ի խորա որութէ վաստ այնորին, զի յուշ առան նմա զնայքենիս իւր պատճեններ է նմա զառաջնին յիշատակ մանկութեան, յիշատակ ողջուգ և քուզը նա և յեկեռ հեռաւոր:

լրագործել այն՝ ինչ որ պակաս է իրան, նորա համար թանկագին է ժամանակը, ուրովհետեւ նա իւր անձնակրթութեան պայմանն ու միջոցն է\*):

Տայց այն ուսուցիչը, որը նայումէ իւր վերայ իրեկ կատարեալ անձնաւորութեան վերայ, այդ և պատրաստի ուսուցիչը, Գիտաերվեգի անուանածի նման՝ ամենից յաճախ բժամկատ է, արշեստաւոր և ինքնահան իւր անձը զարգացնելու գործում: « Ծոռլութիւնը, բժամտութիւնը, ախմարութիւնը, ոգեկան շահերից զուրկ լինելը, ասում է Գիտաերվեգը, անձնապաստանութեան ամենից սովորական հետեանքներն են: Մարդս թէ որ առաջ չէ գնում, ապա ուրեմն յետ է գնում.— այսպէս է մարդուս բնութիւնը, որի համար չկայ մի որոշ կետ, որի վերայ նա կարողանար կանգ առնուլ, մնալ անշարժ:

\*) Պիեր Սիմօն Լավլասը՝ իւր ժամանակու անամենագիտուն մարդկանցից մեկը շատ անգամ ասումէր. « մենք շատ քիչ բան գիտենք, իսկ մեր չգիտեցածը անշափ ու անսահման է... Հումբողը Սոկրատէսի նման ասում էր մեռնեիս. » Ես առաջին անգամն իմացայ այժմ, որ ոչինչ չգիտեմ, ու յասպէս էլ բացադանչեց Գեօթէն մեռնելու ժամանակը. « Լօյս, աւելի և աւելի՝ լոյս, » Միայն նեղ ու սահմանադրակ խելքի տէր մարդիք կարող են յափառակիլ իւր անձն ամենագետ համարելու Խչչքան աւելի զարգացած ու հարուստ լինի բնութիւնը և ինչքան շատ հմառութիւններ ունենայ նա, այնքան աւելի ընդարձակ ու անսահման է նորա համար զբաղի աշխարհի անրմանելի շրջանը, այնքան աւելի պարզ է նորա համար իւր իմացութիւնների թիկութիւնը որբան էլ մեծ լինէին նորա:

Խօսք լրաւ լոէ ուրիմն ուսուցիչը այն միշտ  
վեհ, միշտ կենդանացուցիչ խօսքը,

“Յառաջ, յառաջ,,;

Եպրիլ կնշանակիէ գործունեայ լինել,  
կնշանակէ պարբերութ Եյս՝ կեանքի հիմ-  
նական ծշմարաւթիւնն է, սավորեցէք ա-  
պա, ով ուսուցիչները, ճանաչել ձեր ան-  
ձը, ձեր պակասութիւնները ու թերու-  
թիւնները և քաջարար ու վասահ, ե-  
ռանդագին ցանկութեամբ ու հաստատ  
կամքով գնացէք յառաջ։

Եյն ժամանակ միայն կհասկանաք գուք  
ձեր մարդկային և ուսուցչական համեստ,  
բայց թանկագին գտնձի մեծափառու-  
թիւնը, և չէք այլ ևս գործել փարիսե-  
ցունման ի զոյց մարդկան։ Խող սասում-  
նարանը լինի ձեր այն աշխարհը՝ որ տեղ  
սպարունակուի ձեր ամենայն բանը, և որի  
համար գուք լինիք ամենայն բան։ Եյս  
աշխարհը այն ուժերի ծշմարիտ ու կեն-  
դանի աղքեւրն է, որոնք հարկաւոր են ու-  
սուցչի գործունեութեան, քաջալերու-  
թեան, ինքնակրթութեան համար։ Հա-  
կացէք ձեր կոչումը լիովին, հասկացէք  
նորա վահեմութիւնը, և նա կողեսրէ ձեզ,  
նա կտայ ձեզ այն անդիմագրելի, զօրել,  
յաղթող ոգևորութիւնը, որ բաղիացնու-  
մէ ծշմարիտ ուսուցչի բնաւորութիւնը;  
Միմիայն ինքնակրթութիւնն է տարիս ու-  
սուցչին խոհական գործունեի բնաւորու-  
թիւն, մի գործունեի՝ որ ձգտումէ կատա-  
րելագործել իւր աշխատանքը։ Եռանց  
գորան ուսուցչի բոլոր գործունեութիւնը,  
որքան էլ փայլուն լինէր նա գրսեանց, կը  
լինի շենովի, բոլոր մետաղները կունենան  
մեքենայական կերպարանք և կը կորցնեն  
իրանց խկական արժանաւորութիւնը, իւ-

րեանց ուղեղ բարձրագոյն նպատակը,  
այն է՝ մարդուս զարգացումն։ Ուսումնա-  
րանական ուսման վերայ մանկավարժու-  
թիւնը նայումէ իրեւ ինքնակրթութեան  
միջոցի վերայ, և գրագետ լինել, ձգտումն  
չունենալ անձը կրթելու՝ նշանակումէ  
ձեռք բերել մի այնպիսի զենք, որը չպետք  
է գործածուի և որը աղա ուրիմն անօ-  
գուա է լոլորտիմին։

Իսյց ուսուցիչն կարող է առաջ իւր ու-  
նեցածը միայն, և ով որ ինքնի չի ջանալ  
իւր անձը կրթելու, նա չէ կարող մի այդ-  
պիսի ձգտումն ծագեցնել աշակերտների  
մէջ։

Նարյասիբութիւն և ինքնակրթու-  
թեան ձգտումն չունեցող ուսուցիչը մի  
կոյր գործադրիչ է, միայն այլոյ փարձերի  
ստրուկ է արհեստականութեան, նա չէ  
կարող խսդառ քննել ուսումնատուու-  
թեան մեթօդները և անընդունակ է իւր  
գործը դլաւ հանելու։ Ի վերայ այսը ա-  
մենայնի, ուսուցչի կոչումն ոչ թէ գոր-  
ծաւորական աշխատանքն է, այլ յառա-  
ջացնելու այնպիսի կենդանի մարդկային  
անձնաւորութիւններ, որ կարողանային  
ճանաչել իրանց անձը և իւրօվի սաեղծել  
իրանց վիճակը։ Ը ատ անդամ ուսուցիչ-  
ները գանդապավումեն, «Ճանձրացանք գոր-  
ծելուց» զգուելի է միշտ ու միշտ մէտաղնը  
կրկնել երեխաների հետ։ Եմբողջ կեան-  
քումդ երեխաներ ուսուցանել՝ նշանա-  
կումէ անձդ ենթարկել մշտական երեխա-  
յութեան։ կամայ ակամայ մարդ իմացածն  
էլ կմուանայ, և Եհաւասիկ մի կոպիտ և  
վշտագին մոլորութիւն։ Ուսուցիչները  
մոտանումեն, որ այդ մանուկները մարդիք  
են, որ իւրաքանչիւր երեխայից յառաջ

է զալիս մի կինդանի անձնաւորութիւնը  
և որ ամենից առաջ նոքա ստեղծումնեն  
դոյն իսկ անձնաւորութիւնը:

Եթե խաներին ուսուցանելը հեշտ, իսկ  
այդ նովատակին համար հարկաւոր իմացու-  
թիւնները չնշին կարծել՝ միայն նոքա  
և կարող, որոնք երբեք չեն քննել գոր-  
ծի էւոթիւնը, երբեք չեն մտածել սկզբ-  
նական ուսուցչի կոչման մասին:

Մանկավարժութիւնը հաստատապէս  
ընդունում է, որ սկզբնական ուսուցչի  
փորձը ամենադժուարներից մինն է: Ակըր-  
նական ուսուցման արագութիւնը ան-  
նայն բան է: Դասաւութեան մեծօդները  
այստեղ անձնաւորվումն նորա մեջ, բո-  
լոր աեզեկութիւնները հաւաքուած կինդ-  
րոնանումնեն կրթողի մեջ: Վեճն մի սխալ  
քայլը յառաջցնում, մեծամեծ վնասա-  
կար հեաւանդներ, մեծամեծ սխաններ,  
որոնք անդրադառնումն մանկան ամբողջ  
ապագայ վարդացման վերայ: Հարկաւոր է  
մեծ զգուշութիւն, հմտութիւն, կա-  
րողութիւն և մանկավարժուական սրա-  
ւեսութիւն այդքան գժուար խնդիրը լը-  
րագործելու համար: Ի խակատար մանկա-  
վարժական ազիտութիւն են ցոյց տալիս  
այն ծնողները, որոնք կարծումն, թէ  
մանուկների սկզբնական ուսուցման ար-  
թիւնը կարելի է, յանձնել ամեն մէկ պէ-  
տաշուն մէկ խալքայի:

Եցուկէս շատ անդամ սմանք ցանկա-  
նալով իւրեանց որդւոցը ուսուցանել,  
յանձնումն նորան առաջ առաջ վաս-  
տքանադին ուսուցչի, և այն ժամանակ մի-  
այն երբ նա խանդարած է, լինում ըստ  
ամենայնի, նոր վարձումն իւսնէ ուսուցիչ  
հետունեւ խառարէած է նշանակար համար:

Սկզբում խանգարելը հեշտ է, բայց  
շատ գժուար է ուղղելը: Կազմէս որ մա-  
նուկը իւր առաջին ասրիներում արագ  
է աճում ֆիզիքապէս, ուստի և պահան-  
ջում առանձնապէս լաւ խնամատարու-  
թիւն, այդպէս էլ արագաբար աճումէ  
նու այդ ժամանակում բարսյապէս և մը-  
տառուապէս, ոյս պահանջում էլ ինչքան  
աւելի անսխալ լինին ուսաջին քայլերը,  
այնքան աւելի աղաւ և ուղեղ կլնիի յա-  
ջորդող զարգացումն:

Տունը կողովանելուց յետոյ աւելը փա-  
կանք գնել տիտարութիւն է:

Պէտք է հոգալ չարիքի տուածն առնե-  
լու համար, ահա ի՞նչն է կարեւոր բանը  
գասահարակութիւնն մեջ: Հիւանդների  
արդեն բժշկումն, ոչ թէ դասահարա-  
կում: Փշացած մանկան համար մանկա-  
րայժ է հարկաւոր, և ոչ դասահարակ: Եւ յապէս աղէտ ժլասութիւնը չհասկա-  
նալով սկզբնական կրթութիւնն զօրու-  
թիւնները, զոհումէ մանուկների վիճակը  
այն կողեկներին, որոնց ուսուցչից յետ  
քյելը աշխատանք է համարում: Աժա-  
նութիւնն յետքից են ընկնում, և այդ  
շատ ժեանդ է նստում: գերադաս են հա-  
մարում կողեկները մանկան օրհասից  
(բաղադրից), և նուազացնելով ուսուցչի  
վարձը մինչև մի շնչին քանակութիւն,  
հասպակութիւնը ստեղծում է այնպի-  
սի արհեստաւոր գործաւորներ, որոնք  
դուրի են լինում մանկավարժական զար-  
գացման ոգուց և ուժից, որոնք նա-  
յում են իրանց գործի վերայ: Իրեն  
վարձկանի գործի, այն ինչ սկզբնական  
սուսումնատուութիւնն է, յահկապէս, որ  
պահանջում է, ուսուցչից տռաւել նշա-

նաւոր ու լուրջ յատկութիւններ, մասնաւանդ որ սկզբնական ուսումնառութեան մէջ կրթութիւնն այնքան սերտ կապակից է ուսման հետ, որ անհնար է բաժանել նորանց և դնել նոցա տրանքում մէկ տահման։ Մենք ցոյց տուինք այդ նշանաւոր գործի ընդհանուր կողմերը միայն, բայց այդ էլ բաւական է, որ իւ մացուի թէ ի՞նչքան են մոլորուած այն ծնողները, որոնք սկզբնական ուսումնատուութիւնը համարում են մի անհշան և ուսուցչեց տաղանդ չ'պահանջնդր բան, և թէ ինչպիսի կոպիտ սխալի մէջ են ընկած այն ուսուցիչները, որոնք ուշք ըստ դարձնելով գործին, ձեռնարկելով մի որ և իցէ ունորագոյն, կամ ու զիւրին, մեթօդ ասված բան, գործին աեղեակ են համարում իրանց և այլ ևս պատճառ չեն գտնում իրանց անձը կրթելու։

Եւ այսպէս սկզբնական ուսուցչին առաւել հարկաւոր է անձնակրթութիւնը՝ քան թէ ում և իցէ ուրիշն։

Դա կարեւոր է նորա համար ըստ էութեան գործի, բայց գա կարեւոր է նորան և ըստ նորա գրութեան։

Ամեն մարդ գիտէ, թէ ի՞նչքան աննախանձելի է ուսուցչի վիճակը։ Չապահավուած, առանց իրաւունքների, բայց միայն ծանր պարտականութիւններով, շատ անգամ մնում է նա միայնակ կոպիտ ու ագէտ հասարակութեան մէջ։

Ինչքան շատ են այդքան ձախօրդ հանդամանքներ գործի մէջ, ինչքան ն. շատ են ուսուցչի համար ամբոխն հաւասարակից գառնաղու առ իթները, եթէ որ նա չունենայ այնշափ ոյժ, որ կարողանայ պահպանել իւր անձը ուսուցչուկան կոչ-

ման բարձրութեան վերաց։ Եյդ կինդանի և արդիւնարեր ոյժը անձնակրթութեան ծիգն է, դա կ'պահէ և կըաջալերէ նորան աղիտութեան գեմ ունեցած պատերազմի մէջ, դա կատեղծէ նորա մէջ մի ներքին խռհական կեանք, դա միայն կարող է բաց անել նորա աշխատանքին ու կառարելութեան մէջ անենամաքուր և ամենազնիւ վայելչութեան մի անբողջատ աղքիւր, դա կպաշտպանէ նորան բթանալուց և անշարժութիւնից, կ'սրախուսէ, կ'գօտեազնէ նորան ի գործ և ի յաղթութիւն։

Երապին հանդամանքների և ձախորդութեան աեղն ասնելով այդպիսի ծիգն՝ կ'ըջապատէ ուսուցչին լուսավայժառ բարյական մթնոլորտով և կ'շնէ նորան ժողովրդի լուսաւորութեան կենդանի գործիք, միայն նատաղով ուսուցչին մարդկային ձշմարիտ արժանաւորութեան ու շինծութնու որութիւնը, բնականարար և յակամայից կ'զրաւէ գեպի նա հասարակութեան յարգանքը, ուրեմն անձնակրթութիւնը ու միայն կարող է բարձրացնել ուսուցչի բարյական նշանակութիւնն ու կշեռը, այլ և բարւոքել նորա անահական դրութիւն։ Հասարակութիւնը կզընահատէ այն մորդուն, որ յարգելի ու սիրելի կլինի նորան։ — Եւ այսպէս, առհասարակ անձնակրթութիւնը կարեւոր ձանաշելով ամեն մի ուսուցչի համար մենք առանձին կարեւորութիւն ենք տալիս նորան ժողովրդական ուսումնարանի ուսուցչի համար, և այս պահանջը հիմնում ենք ինչքան որ նորա նշանաւոր կոչման, այնքան էլ նորա դրութեան վերաց։ Մեզ հարկաւոր է այժմ ցոյց աալ այն միջոցները, որոնք ունի և կարող է

ունինալ ժողովրդական ուսուցիչը ձեռքի  
տակ: Իսայց յառաջ քսմ թէ մենք կը-  
ձեռնարկենք այդ գործը՝ կարևոր ենք  
համարում մի անգամ ել կանգ առնուլ  
նորա հասարակական կամ ընկերական  
դրութեան վերայ, որ պարզենք թէ ի՞նչ  
էրաւուններ ունինա հրաւիրելու հասա-  
րակութեան ուշադրութիւնը իւր դործի  
վերայ, և այս տեղեց ել ծագած ի՞նչ պար-  
ականուններ նիքն ուսուցիչը՝ իւր անձ-  
նակրթութեան վերաբերմամբ:

Ավ որ ուշի ուշով զնել է մեր ժողո-  
վրդական կրթութեան գործերը, նա ան-  
տարակոյս զարմացած կլինի մեր հասա-  
րակութեան ժողովրդական ուսուցիչ հետ  
ունեցած այն անկանոն յարաբերութեան  
վերայ, որ ամենամեծ խոշնդրաներից մէ-  
կըն է յառաջադիմութեան դործում:  
Իսոլոր լուսաւորուած երկիրներում ու-  
սումնարանը սրբութեան աեղի է համար,  
վում, որի վերայ կինորոնանում է ժո-  
ղովրդի համակրութիւնը, իսկ ուսուցիչը  
իրեւ մի յարգելի ներկայացուցիւ լուսա-  
ւոր զօրութեան: Իսայց ի՞նչ կարող ենք  
ասել մեր ուսուցիչների հասարակական  
և անահեսական դրութեան մասին: Ո՞եր  
ուսուցիչներից մեծ մասը դատապար-  
տուած է ապրիլաղքատ, դժուար և ծա-  
նըր կեանքով, չնչին և շատ անգամ ան-  
կանոն վարձստացութեամբ, կարճ խօս-  
քով՝ թշուառ. հանգամանքների տակ:

Ավ չի վկայել այս բոլորի ծշմարառութեա-  
նը: Իսայց մի երկրում ուսուցական դոր-  
ծունէութեանց կտխումն ունի ամրող ազգի կրթութիւնը, նորա երջանկութիւ-  
նը, նորա բազար:

Վնդիայի մէջ ժողովրդական կրթու-  
թեան դիմաւոր պաշտպաններից մինը —  
Դօրդ Տրում, յաճախ ասում էր,  
«Պարժապետի այրութենը զենուորների  
սուբներից զօրիղ է», : «Ճողովրդական  
ուսուցչի կոչումն ասում է Գերմանացի  
մանկավարժ Վենցիլին, նոցա աչքում  
միայն աննշան կերպայ, ովքեր մոռանում  
են, որ շնութիւնը կանգնումէ հիմքի վե-  
րայ, և որ բարի հիմքից կարելի է յառա-  
ջապիսնութիւն յուսալ, : Ճողովրդական  
ուսուցիչը անկումէ այնաեղ՝ ուր որ դրե-  
թէ ոչ ոք չի սերմաւմ, և այս աշխատան-  
քը շնում է նորան մարդկութեան ծըշ-  
մարիտ բարերարը. նա ծառայում է հայ-  
րերի և մայրերի տեղակ: Աւսուցչի սո-  
վորածը միակ սփացուածքն է լինում շատ  
անգամ մանուկների համար իրանց կեան-  
քում, որ վաստակումն նոքա մանկական  
հասակում ուսումնարանի մէջ: Վզդելով  
երեխայի զարգացման, նորա բնաւորու-  
թեան և ձգումների վերայ, ուսուցիչը  
ազգում է նորա ապագայ վիճակի վերայ  
ևս: «Վենելով ինկաաի ուսուցչի կոչման  
այդքան վսիմ նշանակութիւնը, նա, ա-  
սում է Վենցիլին, մի ուրիշ տեղ ամեն  
օր պէտք է աղօթէ. Վոառւած իմ,  
առու ինձ իմաստութիւն, համբերութիւն  
և հաւատագրութիւն, :

Գերդաստանը, հասարակութիւնը, տէ-  
րութիւնը, եկեղեցին, յանձնում են ու-  
սուցիչն ամենաթանկագին բանը — իրանց  
մանուկների ապագայն: Ինչպիսի՞ մեծ կո-  
չում է լայնարձակ ու պաշտէտ դործու-  
նէութեան համար: Իսայց ի՞նչքան աւելի  
մեծակիու ու դժուար է ուսուցչի պաշ-  
տօնը, այնքան առաւել օտարուաի ու վըշ-

տալի է նորա ցաւելի դրութիւնը, այնքան առաւել անարդար է հասարակութեան սառնութիւնը գէպի այդ մշակները։ Եյս պիսի մի դրութիւն աչքի առաջ ունենալով՝ անտեղի էլ է երևում ընդարձակ պահանջմունքներ անել ուսուցիչներից։ Քաղցածին նախ և առաջ հաց է հարկաւոր։ կերակրեցէք նորան, ապա թէ նա կ'լսէ ձեզ։ Ի՞նչ յափշտակվել գաղափարներով այնտեղ, ուր որ մարդուս սպանում է մուրացտկանութիւնը։

Տիսուր ծշմարտութիւն է այս. բայց մեր պարտքն է խօսել, մենք իրաւունք չունինք լսելու։ Չարիքի պատճառը հասարակութեան սառնութիւնն է. բայց հասկանում է արդեօք ժողովուրդը ուսուցչի կոչման նշանակութիւնը։ Հիմանդրան է արդեօք նորա սառնութիւնը։ Եւիլ իրաւացի չէր լինել արդեօք վերագրել այդ բանը նորա տգիտութեանը, գործի անտեղեկութեան, որի մասին շատերն են խօսում, բայց լրջամտաբար հազեւ թէ մէկը մտածում է։ Ուրեմն ով բացատրէ նորան գործի էութիւնը, թէ որ մենք, այդ գործին նուիրվածքս, լուս կ'ենանք։ Վենք կարծում ենք, որ ժողովուրդը ծանաչելով ուսուցչի աշխատանքի մեծ նշանակութիւնը, ծանաչելով մանկավարժութեան նորան առաջ սրկած պահանջները, պէտք է հասկանայ իւր սառնութեան անարդարութիւնը, պէտք է ծանաչէ իւր պարտականութիւնները և մի ուսուցչական ճեմարանի վերաբերութեամբ։

Բայց այստեղ կայ գործի մի ուրիշ կողմն էլ։ — Ժողովուրդն ասում է, « մեր ուսուցիչները բատ ամենայնի վատ են. էլ

ի՞նչ աւելացնենք մենք նոցա վարձը, երբ նոքա ստացածին էլ չարժին, : Իսկ ուսուցիչներն ասում են. « մեր ուոծիկը մուրացկանական է. էլ ի՞նչ մենք կեանք մաշնիք, ոսկը կոտրենք առանց մի ակնկալութեան։ Յետին գործաւորը մեզանից երջանիկ է. գոնե նա չունի այն բարոյական փորձանքները (զրկանքները) որոնց ենթակայ է ուսուցիչը։ Մեր ուոծիկն նայելով՝ արածներս էլ գեռ շատ է . . . , : Երկու կողմերն էլ բատ երեսութիւն իրաւացի են. բայց այս կ'լնենք անելաննելի շըրջան։ Ե արունակել գործի այդ դրութիւնը՝ կնշանակէ թողուլ լաւ ապագայ ունենալու յոյսը։ Եյնանդ գործի հետեւնքն է զրօ, իսկ այստեղ վասնգի տակ է սկզբունքը, կորչումէ հաւատարմութիւնը գէպի ժողովրդի քաջակրթութեան մեծ գործակատարը։ Զէ որ մէկը վերջապէս պիտի սկսէ փոփոխել գործի այդ դրութիւնը։ Եւ արդարե մենք տեսնում ենք որ մեր հասարակութիւնը վերջն ժամանակներումս սկսել է զարթնուլ, տեղ անդ զոհաբերութիւններ են լինում ժողովրդի կրթութեան համար։ Ուսումնարանների հոգաբարձութիւնները աշխատում են բաղմացնել նոցա արդինքի աղբիւրները։ Ուրեմն, գործը մնում է ուսուցչի վերայ, որ պարտական է իրագործել ընդհանուր ձգտումը, պարտական է դառնալ ազգի ձգտումների և ցանկութիւնների արժանաւորների այստեղուցուցիչը։ Բայց մեր ուսուցիչները պատրաստուած չեն, անփորձ են, քիչ են զարդացած, սպասելու ժամանակ չունինք, որ այսուչեաւ դեռ նոր սկսէ պատրաստուիլ սպացիալիստ ուսուցիչների մի սերունդ, ժամանակը թուշու-

մէ: Եւ ահա այս տեղ է կարեոր և առողջամիտ այն անշնուրնեւոն յդպումն, որի մասին մենք խօսումենք, կամ թէ ուրիշ կերպ ասելով, այն անչօդնունիւնը, որ կարող են ունենալ մի մեծ գործի ազնիւ մը շահները, առաջնորդ ունենալով իրանց համար հմուտ մարդկանց խորհուրդները:

## Ա.

Ուսուցչի գէպի ինքնակրթութիւնն ունեցած ձգտման առաջին պայմանն է ինչունիւրականունիւնը:

Միայն նա է ձգտում լրագործել իւր թիրութիւնները, ով որ գիտութիւն է, ճանապարհ է նորանց. միայն նա է թիրի ճանաչում իւր կրթութիւնը՝ ով որ սուսանք է լինում նորան. միայն այն ուսուցիչն է հարկաւոր համարում լրագործել իւր զարգացման պակասութիւնը, որ ճանապարհ է իւր կուման նշանակութիւնն և կարեորութիւնը, և այսաեղեց ծագող պարտականութիւնները:

Ամեն մի մասնաւոր աշխատանք պահանջում է գործողեց այս կամ այն յատկութիւնները, որոնք ընդունակ են լինում նորան մի յայտնի գործունեութեան կամ նպատակի համար, ապա ուրիշն պահանջում է դորա համար և ընդունակների հակամիտութիւն: Ուսուցչութիւնն առաւել քան որ և իցէ ուրիշ գործունեութիւն, պահանջում մարդուց կաչումն և հակամիտութիւն, որովհետեւ նա մեքենայական աշխատանք չէ; որ բաւական լինի նորան կատարելու համար միմիայն ջերմեռանդութիւնը, այլ նա ողու ստեղծագործութիւն է, բարոյական

աշխատանք, շատ անդամ մեծամեծ անյարմարութիւնների ենթակայ և յաճախ զարքերութիւններ ու զբկանքներ պահանջող, ապա ուրիշն մի աշխատանք՝ որ պահանջումէ սէր ուհակամիտութիւն: Եթէ ով և իցէ մի ուրիշը, ապա ուսուցիչը ևս առաւել պարտ է բարեխզօրէն և ազնուաբար կշռագատել թէ, ունի՞նա արդեօք հակամիտութիւն և սէր գէպի իւր գործը, կարծ ասել, ունի՞ ուսուցչի կոչուն: Ունի՞ նա բաւականաշափ այժ և եւանդ մի մեծակշիռ պարտականութիւն ազնուաբար կատարելու համար:

Եյս հարցերի ուղղակի պատասխանները նշանաւոր են որքան գործի, այնքան էլ նոյն իսկ ուսուցչի համար: Զկայուինը աւելի թշուառ, քան թէ այն ուսուցիչը՝ որ տրամադիր չէ իւր գործին, որ չէ սիրում նորան: Մի աշխատանք, որ չէ ծագում մարդուս հակամիտութիւնից՝ միշտ ողորմելի վիճակի մէջ կլինի և երբէք չէ կարող յաջողակ լինել: Կա կդառնայ աշխատողի համար մշտական աղբիւր ափսասնքի, նա բռնաւորական և դորա համար էլ անտանելի կ կացուցանէ նոյն իսկ գործը, նա ընդ միշտ կզրկէ աշխատաւորին ոգու պայծառ դրութիւնից (առանց որոյ աներեակայելի է ուսուցիչը), կզայրացնէ ու կակարացնէ նորան: Օր օրի վերայ կանցնի, և թշուառ նահատակը կմարտնչէ ինքն իւր անձի հետ, անիծելով իրան ատելի գործը, և կսպասէ մի յարմար միջոցի, որ հեռու գցէ իրանից այն գժուաբակրելի լուծը և ձեռնարկէ մի ուրիշը:

Եյդպիսի աշխատաւորի համար անձանօթ են կործի այն պայծառ կողմելը,

այն ուրախութիւններն ու վայելչութիւններն, որոնք տալիս է աշխատանքը, պատճառ՝ նոքա ստացվումեն այն ժամանակ միայն՝ երբ սիրումես աշխատանքը։ Ինձ որ այսպիսի երևոյթներ կան ուսուցչութեան մէջ (իսկ սոքա կան ու կան), ապա մենք ուղղակի և վճռողաբար խորհուրդ ենք տալիս այդպիսի նահատակ ուսուցչին՝ թողնել այդ նորա համար տաժանական գործը, թողնել ի սէր մանկանց։ այլ այսպէս նա ինքը տանջվելով՝ ի զուր կտանջէ խեղճ երեխաներին էլ, թողնել ի սէր գործի, քանզի բռնի աշխատանքից ոչինչ օրինաւոր բան չի դուրս գալ, թողնել ի սէր իւր անձին, պատճառ՝ ամեն մի արհեստ, մինչև անգամ առաւել սակաւարդիւն քան ուսուցչութիւնը, երբ տրամադրութիւն ու եռանդ ունիս գէպի նա, աւելի լաւ է ապահովացնում աշխատաւորին։

Իսյց այդպիսի իրողութիւններ շատ սակաւ են լինում։ Յիրաւի, մեր ներկայն զննելով՝ պիտի ճշմարիտը խոստովանենք՝ որ մեր ուսումնարանների մէջ ուսուցիչների մանելը չի լինում գիտակից ու ազատնարութեամբ, ամենից յաճախ ուղարկում նորանց այդտեղ կարիքը, պատահմունքը, անելանելի վիճակը։ Իսյց այս իրողութիւնը՝ մեղդեռ ևս իրաւունք չէ տալիս Պէսովինաս լինել։ “Եւթական շահու համար ուսուցչի պաշտօն ընդունելը մի բնական բան չէ և ոչ ինչ մնաս չունի գործի ընթացքին, — մի թէ նա մի և նոյն ժամանակ չէ կարող սիրել իւր գործը։ Մի թէ նա պարտաւոր չէ լինել աղնուաբար ու հաւատարմութեամբ ծառայել։ “Եորա իսկ անձնական շահն էլ է ու-

րոնել ու գտնել ուսուցչութեան մէջ այն վայելչութիւնը, որ միայն կարող է կապել նորան գործի հետ, շինել ուսուցչութիւնը նորա համար մի գրաւիչ ու թեթե գործ և ողեռել նորա աշխատանքը սիրով ու զգայակցութեամբ։ Պէսով է մտածել միշտ, — այս մանուկները մարզիք են, շատ մասով մեզանից է կտիսուած ոչ թէ միայն դոցա ապագայն, այլ և մեր ազգի և հայրենիքի ապագայն։ Կոպտութիւնը, ըլթամառութիւնը ու վայրենութիւնը, որոնց հետ շատ անգամ հարկաւոր է լինում ուսուցչին, մրցիլ, տգիառութեան տիրապետեանքներն են։ Ուսուցիչը լցոս պէտք է մացնէ կեանիքի խաւարի մէջ։ Վյատեղ հարկաւոր էլ չին մի առանձին հանձարեղութիւնը կամ տաղանդ, գործը աւելի պարզ է։ Հարկաւոր է միայն աշխատանք, վճռականութիւն, հաստատամութիւն և անկեղծ ցանկութիւն, հարդ դառնալ՝ ժարդին կրթելու համար։

(Մատուցեան է յեպագայու)։

Հ. Դ. Ա. Խ. Կ. Ա. Ս. Ա. Ն. Յ.

